

**Չարց** Ինչպե՞ս պետք է տեղակայվեն առևտրային հաշվառքի սարքերը:

**Պատասխան** Առևտրային հաշվառքի սարքերը պետք է տեղակայվեն այնպես, որ.

1) Բացառվի նրանց մեխանիկական վնասվածքների կամ միջավայրի անթույլատրելի ազդեցության հնարավորությունը,

2) Բացառվի կողմնակի անձանց միջամտությունը հաշվառքի սարքերի միացման սխեմային և նրանց աշխատանքին,

3) Ապահովվի սպառողի և մատակարարի ներկայացուցչի համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը,

4) Ապահովվի հաշվառքի սարքերի պահպանումը,

5) Վտանգ չսպառնա մարդկանց կյանքին և առողջությանը: Բնակչության առևտրային հաշվիչները տեղակայվում են ընդհանուր կամ անհատական արկղերում: Բազմաբնակարան շենքերում առևտրային հաշվիչները տեղակայվում են յուրաքանչյուր մուտքի ընդհանուր արկղերում: Արկղերի տեղակայման վայրը ընտրվում է այնպես, որ ապահովվի էլեկտրական լարման սահմանված մեծությունը սպառողի ընդունման վահանակի վրա: